

ԿՐԹՎԱՆ ՅԻՆԱԿՆԴԻՐՆԵՐԻ ԱՐՏԱՅՈՒՄԸ «ՎԱՐԺԱՐԱՆ» ԱՄՍԱԳՐՈՒՄ

Ա. Խ. ԲՐՈՒՏՅԱՆ

19-րդ դարի վերջին քառորդում զգալի առաջընթաց էր ապրում հայ մանկավարժությունը, որը հրապարակ էր հանել բնագավառի բազմաթիվ նոր խնդիրներ: «Անդրկովկաս մուտք գործած բուրժուական հարաբերությունները մի կողմից սասանում էին տնտեսական հին կացութաձևը, մյուս կողմից պարտադրում գիտության և առաջընթացի նորանոր պահանջներ»: Այս շրջանում բացվեցին ինչպես արական, այնպես էլ իգական մի շարք դպրոցներ, արհեստագիտական, երկրագործական ուսումնարան-վարժարաններ: Մասնավորապես, Արևելյան Հայաստանում 1882 թ. գործում էր մոտ 330 դպրոց, որոնցում սովորում էր մոտ 17.000 աշակերտ, և դասավանդում՝ 832 ուսուցիչ¹: Կրթական, մանկավարժական խնդիրները համընդհանուր քննարկման պահանջ էին առաջացնում և ավելի ու ավելի ծավալում տեղ զբաղեցնում պարբերական մամուլի էջերում: Դարի 60-80-ական թվականներին արդեն հրապարակ իջած մանկավարժական մասնագիտական մի շարք պարբերականներ («Դաստիարակ», «Դպրոց», «Մանկավարժական թերթ» և այլն) թեև հանգամանքների բերումով և մասնավորապես նյութական անապահով վիճակի պատճառով կարճ կյանք ունեցան, սակայն նպաստավոր ազդեցություն ունեցան մանկավարժական մտքի զարգացման, մանկավարժական մամուլի ավանդույթների ձևավորման գործում:

1882 թվականին Նիկողայոս Խոսրովյանի խմբագրությամբ Թիֆլիսում սկսեց հրատարակվել մանկավարժական «Վարժարան» ամսագիրը, որը նույնպես կարճ կյանք ունեցավ. լույս տեսավ ընդամենը երկու տարեշրջան, մինչև 1884 թ.: Այն կոչված էր ոչ միայն շարունակելու նախորդների ստեղծած ավանդույթները, այլև նպաստելու «հայ ուսումնարանի, հայ ուսուցչի և հայ ուսանողի դրության բարոյքմանը», ջանալու «հոր կարողության չափ ծառայել ազգային լուսաորության նուիրական գործին»: Պարբերականի նպատակն էր «քննութեան առնել հայ ուսումնարանի ներկայ դրութիւնը և միջոցներ ցոյց տալ նորան ժամանակի պահանջներից համապատասխան դիրք բռնելու համար»: Այս մասին «Վարժարանը» հայտարարում է առաջին համարում տպագրված «Խմբագրութեան կողմից» հոդվածում, ուր հանգամանորեն նշվում են նաև պարբերականի խնդիրները:

Ընդգծելով հայի՝ ուսում և կրթություն ստանալու ցանկությունը, որը «շատ դեպքերում մնում է անկատար, և մեր ազգի առաջ գնալու այդ միակ ճանապարհը չէ հարթվու», «Վարժարանը» իր նպատակն է համարում «նպաստել հարթելու ազգային կրթության փշալից ուղին, առաջնորդելով ժողովրդեան մէջ գործելու փափագ ունեցող անձանց և միջոցներ ցոյց տալով նոցա ժողովրդեան պահանջին բաւականութիւն տալու»²:

«Վարժարանի» ծրագիրը ներկայացվում էր 8 բաժիններով: Առաջին բաժինը նախատեսված էր ազգային ուսումնարանների վերաբերյալ վեհափառ հայրապետի և թեմական վերատեսուչների կարգադրությունների հրապարակման համար: Երկրորդ՝ մանկավարժական բաժինը գետեղում էր մանկավարժական բովանդակությամբ հոդվածներ: Բանասիրական բաժինը կոչված էր ազգային պատմությանը, աշխարհագրությանը, տոհմագրությանը, գրականությանը և լեզվին վերաբերող հոդվածների հրապարակման համար:

¹ Մ. Մխիթարյան, 19-րդ դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից, Եր., 1976, էջ 267:

² Տե՛ս «Արձագանք», Թիֆլիս, 1882, № 27:

³ «Վարժարան», Թիֆլիս, 1882., Ա տարի, №№ 1-2:

⁴ Նույն տեղում:

Մատենախոսության բաժինը նվիրված էր դասագրքերի և մանկական ընթերցանության գրքերի վերաբերյալ քննական հոդվածներին: Մանուկների ընթերցանության համար տպագրվող գրույցները, վեպերից առանձին հատվածներ և այլ նյութեր ընդգրկված էին մանկական բաժնում:

Ամսագրի ծրագրում նախատեսված էին ևս մի քանի՝ «Այլ և այլք», մանուկների համար հանելուկների, խնդիրների և խաղերի, ինչպես նաև հայտարարությունների բաժիններ:

Ծրագրված խնդիրներն իրականացնելու գործում խմբագրությունն ակնկալում էր մանկավարժական բնագավառի հայտնի գործիչների օժանդակությունը, որոնք խոստացել էին համագործակցել «Վարժարանի» հետ:

«Վարժարանի» հրատարակությունը համընկավ հայ իրականության մեջ կարևոր այնպիսի մի իրադարձության, ինչպիսին Ռուսաստանի հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովն էր, որը գումարովեց Թիֆլիսում, 1882 թվականի օգոստոս-սեպտեմբերին: Այդ առիթով պարբերականն ինչպես առաջին, այնպես էլ հետագա մի շարք համարներում տպագրել է թղթակցություններ, ճանաչված մանկավարժների հոդվածներ, ժողովում նրանց ներկայացրած դասախոսություններից հատվածներ, առաջարկներ, վերլուծություններ: Դրանցում ներկայացվում են ժողովի նպատակը, դերն ու նշանակությունը հայ կրթական գործի կազմակերպման ու հետագա զարգացման խնդրում:

«Վարժարան» ամսագիրը գրեթե բոլոր համարներում անդրադարձել է դպրոցի հիմնահարցերին, պարբերաբար քննարկել դպրոցների տիպերի, ուսումնական ծրագրերի, ուսուցչական կադրերի, նրանց նյութական վիճակի վերաբերյալ բազմազան հարցեր:

Աքսիտղոս Հովհաննիսյանի «Մի քանի խօսք մեր հին ու նոր ուսումնարանների մասին» հոդվածում, որը մի հատված է հեղինակի հրապարակային դասախոսությունից, ներկայացվում են XIX դարի 50-ական և 80-ական թվականների հայ ուսումնարանների տիպերը, կառուցվածքը, համեմատություն է անցկացվում այդ հին ու նոր կրթօջախների ընդհանուր բնութագրերի միջև: Նշելով, թե 15 դար շարունակ կրթության և ուսուցման գործը գտնվում էր հոգևորականության ձեռքում և նրա հսկողության ներքո, հեղինակն ընդգծում է, որ դրանք բոլորն էլ եղել են վանքերի, քաղաքների և հազվադեպ՝ մեծ գյուղերի ուսումնարաններ: Դրանցում «մեքենայական վարժութիւնները, առանց բացատրելու և քննելու աւանդներն էական եղանակներն էին ուսուցման, անհասկանալի և միակողմանի բովանդակութեամբ գրքերը անհրաժեշտ միջոցներ էին ուսման: Անողորմ ֆիզիքական պատիժը և խիստ յանդիմանութիւնները, որ երբեմն ժամանակի պահանջումըներից համապատասխանում էին, ամենազլխաւոր միջոցներն էին բարոյական կրթութեան և կարգապահութեան, որ, ի հարկ է զգալի մեղմանում էր կոյսերի վարժատունների մէջ»⁵:

Դառնալով ընթացիկ ժամանակաշրջանում գործող ուսումնարանների խնդրին՝ Ա. Հովհաննիսյանը նշում է, թե «այժմ հայի համար ուսումնարանն ազգային ամենակարևոր հաստատութիւններից մէկն է և հայ մատաղ սերունդի կրթութիւնն ամենամեծ հոգացողութեան առարկայ է դառել բոլոր դասակարգերի համար. նա մանուանդ, որ լուսաւորութիւնն ու յառաջադիմութիւնը համահաւասար կախումն ունեն ուսումնարանից»⁶: Հոդվածի հետագա շարադրանքում հեղինակը անդրադառնում է մասնավորապես Ռուսաստանի հայ ուսումնարաններին և նշում, որ դրանք կառավարվում են թեմական վերատեսուչների կողմից, և դրանց վարչական իրավասությունը, ինչպես և դարեր շարունակ, պատկանում է հայոց հոգևոր ծայրագույն իշխանությանը:

Նշելով, որ ուսումնարանների ներքին և արտաքին կազմակերպման առումով զգալի փոփոխություններ են եղել, հեղինակն ընդգծում է «հին» և «նոր» ուսումնարանների հատկանշական տարբերությունները: Ըստ այդմ, կարևորվում է այն իրողությունը, որ ուսման և կրթության գլխավոր կենտրոններն արդեն գտնվում են ոչ թե վանքում, այլ հասարակական կյանքի ավելի զարգացած տեղերում՝ քաղաքներում և մեծ չափով՝ աշխարհական անձանց ձեռքում: Նշվում է նաև այն փաստը, որ արդեն կան բավականաչափ օրիորդական ուսումնարաններ: Միաժամանակ տեղեկացվում է, որ բոլոր ուսումնարանների կառավարման համար մշակված է ընդհանուր կանոնադրություն: Բացի այդ, բոլոր ուսումնարանները

⁵ Նույն տեղում:

⁶ Նույն տեղում:

պարտավոր են հետևել կանոնավոր ծրագրի, որը, անշուշտ, կատարյալ չէր կարող լինել և կարիք ուներ կատարելագործվելու, քանի որ մախկին կրոնական միակողմանի կրթությամբ հաջորդում է բազմակողմանի կրթությունը. մեծ տեղ է հատկացվում մաթեմատիկական, բնագիտական, աշխարհագրական, պատմական գիտությունների դասընթացներին:

«Վարժարանը՝ հետևողականորեն անդրադարձել է ուսումնարաններում գրաբարից փոխարինելու եկան և հաստատված աշխարհաբարի դերին, մայրենի լեզվի դասագրքերի բովանդակությամբ և այլ խնդիրների: Այնուհանդերձ, ըստ պարբերականի, նոր ուսումնարաններում էլ դեռևս շատ ու շատ բացթողումներ կան. ժողովրդական դպրոցների նյութական միջոցների սղությունը, լավ ուսուցիչների պակասը, ուսումնական ծրագրերի ոչ լիակատար միակերպությունը և այլն: Ուշադրություն է դարձվում նաև առողջապահական տեսակետից ուսումնարանների՝ իբրև շինության անհրաժեշտությանը:

Առավել մտահոգիչ է ուսուցիչների վիճակը: Պարբերականը ցավով նշում է, որ տակավին երիտասարդ հայ ուսուցիչը ոգևորությամբ ու մեծ հույսերով գալով ազգային ուսումնարան՝ մեծ մասամբ այնտեղ կորցնում է առողջությունը, երիտասարդությունը և հայտնվում նյութապես այն աստիճան թշվառ վիճակում, որ անգամ ստուգում է կամ չի կարող մտածել իր անձնական խնդիրների, նույնիսկ ընտանիք կազմելու մասին: Մինչդեռ ժողովրդական ուսումնարանները, ծխական դպրոցները կարիք ունեն լավ պատրաստված ուսուցիչների: Այս առումով հիշատակվում է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, որն արդեն մի քանի տարի տալիս էր պատրաստված ժողովրդական ուսուցիչներ: Նոր ուսումնարանի հայ ուսուցչի գլխավոր հատկանիշը, ըստ պարբերականի, անձնվիրությունն է: Բայց նրան զանազան օգնողները հազվագյուտ են: Ինչպիսի՞ն պետք է լինի ուսուցիչը, ի՞նչ խնդիրներ ունի նա, ինչպե՞ս պետք է նա դրանք իրագործի: Այս և նման բազմաթիվ հարցերում հայ ուսուցչին օգնելու նպատակով «Վարժարանը» հրատարակում է նաև օտար հեղինակների հոդվածներ (թարգմանաբար): Ինուերենով և եվրոպական լեզուներով հրատարակվող մանկավարժական հանդեսները հայ ուսուցիչներից շատերի համար անմատչելի էին, ուստի «Վարժարանը» խնդիր էր դրել հանդես գալ իբրև թարգման, որպեսզի նրանք գոնե իր միջոցով կարողանան ծանոթանալ մանկավարժական գիտության վերաբերյալ նորանոր խնդիրներին: Ահա Կուրտմանիի «Ուսուցչի կոչումը»⁷ հոդվածը Ա. Սպարապետյանի թարգմանությամբ, ուր նշվում է ուսուցչի (բարձրագույն կամ ժողովրդական դպրոցի) բազմակողմանի գիտելիքներ ունենալու, ինչպես նաև այդ գիտելիքներն ավանդելու ձևերի իմացության անհրաժեշտությունը: «Ամենից առաջ ուսուցիչը պիտի կարողանայ հաղորդել ուրիշներին իր գիտեցածը: Ուսուցիչը իր հաղորդելու տեղեկությունները և իր բոլոր դասատուները պիտի կարողանայ յարմարեցնել աշակերտների մտաւոր կարողութեան աստիճանին. նա ինքը պիտի իջնի նոցա հասկացողութեան աստիճանին, եթէ միայն աշխատում է նոցա ապագայ զարգացման համար»:

Կարևորելով ուսուցչի հեղինակությունը և սաների կողմից վայելած հարգաքն ու սերը՝ հոդվածագիրը համոզումնք է արտահայտում, թե ուսումնարանում կրթող ուսուցչան հիմքը ուսուցչի հեղինակությունն է, նրա բարոյական ազդեցությունը աշակերտի հոգու վրա:

Իրուսական «Ժենսկոյն օբրազովանին» ամսա լից թարգմանված «Մանկական խաղերը և նոցա նշանակութիւնը» հոդվածում (թ՝արգմ.՝ Գ. Օսհրուդադյանցի) խոսվում է խաղերի՝ որպես կրթողական միջոցների՝ կարևոր նշանակության մասին՝ միաժամանակ ընդգծելով այն հանգամանքը, որ եթե «հասակաւորների խաղը - միայն միջոց է նպատակին հասնելու, որը կարող է զանազան լինել», ապա «մանկան խաղը - նոյն իսկ նպատակն է և իր՝ հուն մտաւոր գործունէութեան արդիւնը»⁸: Մանուկների խաղը դիտելով որպես նրանց մանկական աշխարհընկալման արտահայտություն՝ նշվում է, որ հենց այդ տեսակետից պետք է քննել խաղը՝ որոշելու համար դաստիարակության գործին նրա տված օգուտն ու վնասը: Ընդգծելով, որ խաղը նպատակ է մանկան թե՛ ֆիզիկական և թե՛ մտավոր ընդունակությունների զարգացմանը, նշվում է նաև խաղերի՝ բնավորության կազմակերպման վրա ունեցած նշանակալից ազդեցության մասին: Հոդվածում փորձ է

⁷ «Վարժարան», Թիֆլիս, 1884, Բ տարի, № № 4-5:

⁸ Նույն տեղում:

⁹ Նույն տեղում, 1883, № 9:

արվում տալ նաև այն հարցի պատասխանը, թե ի՞նչ նշանակություն ունի մանկական խաղը դաստիարակի համար: «Որովհետև մանուկների խաղը նոցա մանկական աշխարհատեսութեան արտահայտութիւնն է, այդ պատճառաւ հասկանալի է, որ խաղի մէջ ամենից պարզ են արտահայտւում մանկանց գիտութիւնները, կարողութիւնը, վարք ու բարքը և սովորութիւնները: Ուրեմն թո՛ղ դաստիարակը օգուտ քաղէ մանկական խաղից, իբրև ամենալաւ միջոց իր սանիկի անհատական առանձնայատկութիւնները ուսումնասիրելու և հասկանալու համար»¹⁰:

Մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության գործում «վարժարանը» էական դեր է վերապահում հայ ժողովրդի պատմության ուսուցմանը: Այս առումով հիշարժան է Ս. Պալասանյանի «Ազգային պատմութիւնը տարրական ուսումնարաններում» հոդվածը, որտեղ հեղինակը հայ դպրոցի բազմաթիվ խնդիրների շարքում լեզվից և կրոնից հետո կարևոր դեր է վերապահում ազգային պատմության դասավանդման խնդրին: Եվ եթե կրթական գործում արդեն իսկ վճռվել են հին և նոր լեզուների տեղերը, մշակվել ու մշակվում են դասավանդման եղանակները, նոր ձեռնարկներ են հրատարակվում՝ լեզվի ուսուցումն ավելի հեշտացնելու համար, ապա ազգային պատմությունը «այն դիրքը չունի մեր ուսումնարաններում, որ ժամանակը եւ կրթութեան պայմանները պահանջում են»¹¹: Իսկ պատմության նպատակը, ըստ հոդվածագրի, ազգին իր անցյալը ճանաչեցնելն է, նրան իր ներկա վիճակը հասկացնելը և ցույց տալն է, թե ինչ ճանապարհով պիտի ընթանա՝ ավելի լավ ապագա ունենալու համար: Եվ հեղինակը ցավ ու ամոթ է զգում՝ ասելու, որ ծխական կոչված ուսումնարաններում, ուր կրթվում են ազգի մեծագույն մասի զավակները, շատ չնչին տեղ է տրված ազգային պատմությանը: Մինչդեռ ուսումնարանը պետք է ձգտի մանուկների մտքում փոքր տարիքից տպավորել ազգային պատմության գլխավոր մասերը՝ նրանց մատաղ սրտերում սեր և հարգանք սերմանելով դեպի սեփական ազգը և տոգորել նրա հանդէպ որոշակի պարտավորություններով¹²: Այս նպատակն իրագործելու համար ծխական դպրոցը պետք է ջանա «պատմութեան դասերը լեզուի դասերի հետ կապել առանց մէկի կամ միւսի յառաջադիմութեանը վնասելու»: Եվ կրկին կարևորվում է ուսուցչի դերը, քանի որ նա պետք է վարպետորեն կարողանա իր դասերի համար այնպիսի անձանց ու անցքեր ընտրել, որ առավելապես արտահայտեն ազգային կյանքը: Իսկ «երեխայի *խելքը* դեռ այնքան թույլ է, որ վերացական բաներ ըմբռնել ու մարսել չէ կարող, եւ ընդհակառակն նորա *երևակայութիւնն* այնքան վառ է, որ բաւական սնունդ չէ գտնում իր համար»: Ուստի և ուսուցիչը պետք է կարողանա պատմության նյութը նրան ներկայացնել կենդանի պատկերներով:

Իսկ ահա հայտնի մանկավարժ Առաքել Բահաթյանը իր «Թե ինչպէս պիտի ուսուցանուի պատմութիւնը մեր ազգային դպրոցներում»¹³ հոդվածում առաջադրում է ազգային դպրոցներում պատմությունը դասավանդելու համար ուսուցման նոր մեթոդներ: Նա զընտնում է, որ ուսուցման յուրաքանչյուր նյութ պետք է մշակվի հինգ առանձին աստիճաններով, որոնք են՝ վերլուծություն, համադրություն, կապակցություն, համակարգություն և գործադրություն: Հեղինակը փորձում է ցույց տալ, թե ինչպէս կարելի է գործադրել այդ օրենքները պատմությունն ուսուցանելիս: Այդ նպատակով նա իր հոդվածը, որը շարունակաբար տպագրվում է նաև հաջորդ համարներում, բաժանում է առանձին հատվածների: Առաջին բաժնում հեղինակը մեկնաբանում է վերլուծությունը պատմության մէջ: Այդ նպատակով իբրև վերլուծության նյութ պատմության համար նա նախ ներկայացնում է հայրենագիտությունը, պատմական «առակներն» ու վեպերը, ինչպէս և հայոց լեզուն: Մասնավորապես վերջինիս առումով նշվում է. «Հայոց լեզուի ուսուցման վերջնական նպատակը դաստիարակող դպրոցներում չէ իր աշակերտներին ուսուցանել քերականութիւն կամ՝ պատրաստել հայոց լեզուի քաջ գիտակներ նորա խնդիրը չէ նաև քերականութեան գեղեցիկ մշակութեամբ հասնել այսպէս կոչուած ձևական զարգացման»¹⁴:

¹⁰ Նույն տեղում, 1883, № 10:

¹¹ Նույն տեղում, 1882, № 3:

¹² Նույն տեղում:

¹³ Նույն տեղում, 1883, № 7:

¹⁴ Նույն տեղում:

Հրատարակության Երկրորդ տարեշրջանի վերջին՝ համատեղ համարում (№№ 7, 8, 9, 10) «Մեր դպրոցական ղեկավարների գործունեության անթի» խմբագրական հոդվածում խոսվում է ամսագրի գործունեության ընթացքին հայ դպրոցական ղեկավարության մասնակցության իսպառ բացակայության մասին: Նշելով, թե հայ դպրոցների վարչությունը, թեմական վերատեսուչները և տեսուչները բնավ ոչինչ չարեցին «Վարժարանի» առօրեայ խնդիրներով զբաղեցնելում», ընդգծվում է, որ նրանցից ոչ մեկը չբարեհաճեց փոքր-ինչ ուշադրություն դարձնել իր խնամքին հաճախված դպրոցների նյութական, ուսումնական ու բարոյական կողմերի վրա: Ընդգծելով, թե «հայ մամուլը միշտ իր էջերը բացել է հայ դպրոցների մասին տեղեկությունները հյուրընկալելու, «Վարժարանը» միաժամանակ գտնում է, որ աշխատանքը շատ արդյունավետ կլիներ, եթե թեմական վերատեսուչները իրենց գործունեության մասին որոշակի տեղեկագրեր տրամադրեին՝ մամուլում տպագրելու համար:

Ներկայացնելով, որ ուսուցչական որևէ ժողովում հստակ տեսանելի է և՛ տեսչի, և՛ ուսուցիչների գործունեությունը, պարզորոշ երևում է դպրոցի ներքին կյանքը՝ իր լավ և վատ, գեղեցիկ և տգեղ կողմերով, իսկ այդ ժողովի ճիշտ հայելին նրա արձանագրությունն է, նաև նշվում է, թե «այնուհետև, ցատելով պէտք է նկատենք, որ այդ ժողովի հայելին դիտելուց, դորա արձանագրությունը կարդալուց, մի խօսքով, մեր դպրոցների ներքին կեանքի մասին ճիշտ եւ անթերի գաղափար կազմելուց շատ եւ շատ զուրկ են մեր ուսուցիչները, մեր վարժուհիները, մեր ծնողները, մեր ընթերցողները»¹⁵: Եվ դա, ըստ հոդվածի, այն պատճառով, որ այդ մասին ոչ մի տեղեկություն չի ներկայացվում պարբերական մամուլին: Մինչդեռ եթե այդ ժողովներից քաղվածքներ հրատարակեին մամուլում, դրանով «սաստիկ պիտի օգուտներ դպրոցական գործը»:

Կարևորելով մամուլի դերը կրթական հարցերում պարբերականը պահանջում է, որ մամուլը և դպրոցը ձեռք ձեռքի տված, «միացյալ ոյժերով խորհրդածեն, մշակեն, լուսաբանեն մանկավարժական այն ընդհանուր ու մասնատր սկզբունքները, որոնք պէտք է նպաստեն հայ դպրոցական գործի բարուքման և բուն հայկական մանկավարժության վերածնելիության»¹⁶:

Գիտարկելով ամսագիրը ըստ ժանրային առանձնահատկությունների՝ նկատում ենք, որ բոլոր համարներում գերիշխում է հոդվածի ժանրը: Դրանք և՛ հայ հեղինակների ստեղծագործություններ են, և՛ թարգմանություններ օտար հեղինակներից, և՛ արտատպություններ այլ պարբերականներից: «Վարժարանի» էջերում մեծ տեղ է տրվել մանկավարժական գիտության նվաճումներին Եվրոպայում: Տպագրվել են հոդվածներ՝ եվրոպական կրթօջախների կառուցվածքի, ուսուցման համակարգի, տարբեր առարկաների դասավանդման, ուսումնական գործընթացի վերաբերյալ: Հրատարակվել են նեղ մասնագիտական բնույթի հոդվածներ, որոնց համար քննարկման առարկա են եղել ուսման հետ կապված մի շարք խնդիրներ (բնագիտական առարկաների դասավանդում, գրագիտության, հայրենագիտության ուսուցում, դպրոցական դաստիարակություն, մանկական խաղեր և այլն):

Պարբերականի «Մատենախօսություն» բաժնի՝ հաճախակի տպագրվել են գրախոսություններ՝ նվիրված ժամանակի դպրոցակի՝ ձ ձեռնարկներին, մանկական գրականությանը, հայտնի մանկավարժների աշխատություններին:

Ամսագրի էջերում հաճախ է բանավեճ ծավալվել մանկավարժական այս կամ այն խնդրի առնչությամբ: Ուշագրավ են հատկապես Ա. Մանդիլյանի և Ղ. Աղայանի, Ա. Մանդիլյանի և Ա. Բահաթյանի միջև ծավալված բանավեճերը լեզվի, գրաճանաչության ուսուցման և այլ հարցերի շուրջ:

«Վարժարանի» բոլոր համարներում տպագրվել են լուրի ժանրով գրված նյութեր, որոնք իրենց անփոփոխ տեղն են գտել «Այլ եւ այլ» բաժնում: Դրանք հակիրճ տեղեկություններ են հայ կրթական բնագավառի նորույթների, պարբերական մամուլի նոր հրատարակությունների մասին, ինչպես նաև՝ ծանուցումներ ու հայտարարություններ:

¹⁵ Նույն տեղում, 1884, Բ տարի, №№ 7, 8, 9, 10:

¹⁶ Նույն տեղում:

Բոլորելով հրատարակման երկրորդ տարեշրջանը՝ «Վարժարանը» դադարեց լույս ընծայվել՝ բաժանորդների սակավության և նյութական միջոցների սղության պատճառով: Հանդեսն ուներ ընդամենը 165 վճարող բաժանորդ, որոնցից միայն 50-ն էին ուսուցիչներ: Չնայած կարճատև ընթացքին՝ ամսագիրն ազդեցիկ դեր խաղաց 19-րդ դարի վերջին քառորդի հայ կրթական գործի զարգացման խնդրում՝ լուսաբանելով ու քննարկելով հայկական կրթօջախների առջև ծառայած բազմաթիվ խնամարարներ: «Վարժարան» ամսագիրը իր էջերում ջանացել է մշակել հայ մանկավարժական մամուլի ճիմնական սկզբունքները, նպաստել մանկավարժական մտքի աշխուժացմանը, զարգացնել մասնագիտական մամուլի ավանդույթները, հիմք դնել նոր ավանդույթների:

Ա. Խ. БРУТЯН - *Проблемы образования в журнале «Варжаран»*. - Журнал «Варжаран» занимает своеобычное место в истории армянской педагогической периодики XIX века. Он просуществовал недолго и как профессиональный журнал не получил широкого резонанса в среде учителей и школьного руководства, хотя вокруг него собрались высококвалифицированные сотрудники и корреспонденты, многоопытные педагоги. Журнал уделял большое внимание выработке главных принципов армянской педагогической печати, стремился оживить современную педагогическую мысль, развить сложившиеся и заложить новые традиции педагогической периодики, и, по мнению автора, это последнее ему вполне удалось.